Արձանագրություն N 2
«ԵՔ-ԳՀԾՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման հանձնաժողովի նիստի

ք. Երևան

27.12.2019թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Մկրտչյան /ԳԱՊ/
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Զեյնալյան /գնահատող/, Ա. Ղարիբյան /գնահատող/, Ժ. Բալաբանյան /բացող/, Ա. Ավետիսյան /բացող/
Հանձնաժողովի քարտուղար՝ Ս. Եղիազարյան

1. Տեղեկություններ «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգին հայտերի բացման մասին

(Ա. Մկրտչյան)

Ընդունել ի գիտություն, որ գնման ընթացակարգի հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով հրավերով սահմանված օրը և ժամին՝ **2019 թվականի դեկտեմբերի 27-ին, ժամը 11:00-ին,** Երևանի քաղաքապետարան, ք. Երևան Արգիշտիի 1 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/31» ծածկագրով գնման ընթացակարգին հայտեր ներկայացրած մասնակիցների մասին

(Ա. Մկրտչյան)

Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

h/h	Մասնակիցների անվանումը
1	ՄՏՍ Արմենիա ՓԲԸ
2	Յուքոմ ՍՊԸ
3	Ջիէնսի Ալֆա ՓԲԸ

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

3. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

(Ա. Մկրտչյան)

3.1 Գնման ընթացակարգի մասնակիցների կողմից ներկայացվել են հետևյալ գնային առաջարկներ:

Հ/Հ	Գնման առարկայի անվանումը	Նախահաշվային գներ	Մասնակիցների անվանումները		
			ՄՏՍ Արմենիա ՓԲԸ	Յուքոմ ՍՊԸ	Ջիէնսի Ալֆա ՓԲԸ

			Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գին	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գին	Ինքնարժեք	Շահույթ	ԱԱՀ	Ընդհանուր գին
1	**Տվյալների հաղորդման ծառայություններ**	3534100	4123000	217000	868000	5208000	2200000	300000	500000	3000000	3085000	540000	725000	4350000

3.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ – 0

4. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Ա. Մկրտչյան)

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, բացառությամբ ՄՏՍ Արմենիա ՓԲԸ-ի կողմից ներկայացրած հայտի: Մասնավորապես մասնակցության հայտում բացակայում է գնանշման հարցմանը մասնակցելու դիմում-հայտարարությունը /հավելված 1/-ը: Վերոգրյալը չի համապատասխանում հրավերի առաջին մասի 4.3 կետի 1-ին ենթակետի պահանջներին, որով սահմանվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է.

1) իր կողմից հաստատված՝ հրավերի 2-րդ մասի 2.1 կետով նախատեսված դիմում-հայտարարություն՝ նշելով էլեկտրոնային փոստի հասցեն, հարկ վճարողի հաշվառման համարը, գործունեության հասցեն և հեռախոսահամարը, որը ներառում է՝

ա) հավաստում սույն հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին.

բ) հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, սույն հրավերի 1-ին մասի 2.4 կետով սահմանված կարգով և ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին.

գ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում գերիշխող դիրքի չարաշահման և հակամրցակցային համաձայնության բացակայության մասին.

դ) հայտարարություն սույն ընթացակարգի շրջանակում իրեն փոխկապակցված անձանց և (կամ) իր կողմից հիմնադրված կամ ավելի քան հիսուն տոկոս իրեն պատկանող բաժնեմաս (փայաբաժին) ունեցող կազմակերպությունների միաժամանակյա մասնակցության բացակայության մասին.

ե) այն ֆիզիկական անձի (անձանց) տվյալները, ով ուղղակի կամ անուղղակի ունի մասնակցի կանոնադրական կապիտալում քվեարկող բաժնետոմսերի (բաժնեմասերի, փայերի) ավել քան տաս տոկոսը, ներառյալ ըստ ներկայացնողի բաժնետոմսերը, կամ այն անձի (անձանց) տվյալները, ով իրավունք ունի նանակելու կամ ազատելու մասնակցի գործադիր մարմնի անդամներին, կամ ստանում է մասնակցի կողմից իրականացվող ձեռնարկատիրական կամ այլ գործունեության արդյունքում ստացված շահույթի տասնհինգ տոկոսից ավելին: Սույն ենթակետում մեջ նշված անձանց բացակայության դեպքում ներկայացվում է գործադիր մարմնի ղեկավարի և անդամների տվյալները: Ընդ որում եթե մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից, ապա սույն պարբերությամբ նախատեսված տեղեկատվությունը, որը հայտերը բացելուց հետո ավտոմատ եղանակով հրապարակվում է համակարգում, պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության հետ միաժամանակ հրապարակվում է նաև տեղեկագրում.

4.2 Ելնելով վերոգրյալից և համաձայն <<Գնումների գործընթացի կազմակերպման մասին>> << կառավարության 526-Ն որոշմամբ հաստատված կարգի/այսուհետ՝ Կարգ/ 41-րդ կետի, գնահատող հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը, ծանուցել ՄՏՍ Արմենիա ՓԲԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունը:

Սահմանված ժամկետում անհամապատասխանությունը չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի անբավարար և կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5 դեմ - 0:

5. Ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Ա. Մկրտչյան)

Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել փաստաթղթերի ստացման հաջորդ աշխատանքային օրը, ժամը 09:30-ին, Երևանի քաղաքապետարան, Արգիշտիի 1, 3-րդ հարկ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

Հանձնաժողովի

Նախագահ՝ ..... Ա. Մկրտչյան

Անդամներ՝ ..... Վ. Զեյնալյան

..... Ա. Ղարիբյան

..... Ժ. Բալաբանյան

..... Ա. Ավետիսյան

Քարտուղար՝ ..... Ս. Եղիազարյան